



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**ՀԻՄՆԻՍԱԿՅԻՆ ԱՄԵՐԻԿԱԿԻ ԱՐԵՒՍՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
**H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE**  
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745  
E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ 90ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ԱՌԻԹՈՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔ**

Չորեքշաբթի, 28 Մայիսը Հայաստանի Հանրապետության հիմնադրության 90-րդ տարեդարձն է:

Այս առիթով, Կիրակի, Մայիս 25-ին, Թեմիս բոլոր եկեղեցիներուն մէջ Հանրապետական Մաղթանք եւ Հայկական Եռագոյնի օրհնութիւն պիտի կատարուի: Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Ս. Սուշեղ Արք. Մարտիրոսեան Օրէնճ Քաունթիի Սրբոց Քառասնից Մանկանց եկեղեցւոյ մէջ պիտի նախագահէ Ս. Պատարագին եւ պիտի կատարէ դրօշի օրհնութիւնը:

Պատարագի ընթացքին, Առաջնորդ Սրբազանը պիտի փոխանցէ օրուան յատուկ իր պատգամը:

Յայտնենք նաեւ, որ մեր բոլոր եկեղեցիներուն մէջ, Ս. Պատարագի ընթացքին, պիտի ընթերցուի Առաջնորդ Սրբազան Հօր անկախութեան 90ամեակի պատգամը:

## **PRELATE TO PRESIDE OVER THANKSGIVING PRAYERS ON THE 90<sup>TH</sup> ANNIVERSARY OF THE FIRST REPUBLIC OF ARMENIA**

Wednesday, May 28, is the 90<sup>th</sup> anniversary of the first Republic of Armenia. By the ordinance of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, thanksgiving prayers for the Republic will be offered, the Prelate's message on this occasion will be read, and the blessing of the flag will take place in all Prelacy churches.

The Prelate will preside over Divine Liturgy at Forty Martyrs Church in Orange County and will deliver the sermon. During Liturgy, the Prelate will conduct the blessing of the Armenian flag.

**ԿԼԵՆՏԵՅԼԻ ՄԵՋ, ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՊԻՏԻ ԿԱՏԱՐԷ Ա.Ս.Ն.  
ՆԱՅԱՏԱԿՆԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆ ԲԱՑՄԱՆ  
ԱՂՕԹԸ**

Երկուշաբթի, 26 Մայիսը, Ամերիկայի Վեթերաններու Յիշատակի տուն է:

Կազմակերպութեամբ Կլենտէյլի Առեւտուրի Գրասենեակի Զաղաքացիներու եւ Հայրենասիրութեան Յանձնախումբին, առաւօտեան ժամը 9:30-ին, քաղաքապետարանի մուտքին, վեթերաններու յիշատակին նուիրուած յուշակոթողին շուրջ, յատուկ արարողութիւն մը տեղի պիտի ունենայ յարգելու համար յիշատակը բոլոր այն հերոսներուն, որոնք իրենց կեանքը զոհած են Միացեալ Նահանգներու ազատութեան համար:

Առաջնորդ Սրբազան Հայրը, ընդառաջելով իրեն տրուած հրաւերին, ներկայ պիտի ըլլայ արարողութեան եւ պիտի կատարէ բացման աղօթքը: Սրբազանին պիտի ընկերակցայ Արժ. Տ. Արտակ Բինյ. Տեմիրճեան:

**PRELATE TO DELIVER THE INVOCATION AT THE MEMORIAL  
DAY COMMEMORATION AT GLENDALE CITY HALL**

On the morning of Monday, May 26<sup>th</sup>, the Prelate will deliver the invocation at a Memorial Day commemoration organized by the City of Glendale and the Glendale Chamber of Commerce Citizenship and Patriotism Committee to pay tribute to the members of the United States military who sacrificed their lives to defend our nation. The event will take place in front of the Veterans Memorial at Glendale City Hall. The Prelate will be accompanied by Rev. Fr. Ardag Demirjian.

**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ  
ԱՌԱՋՆՈՐԴ Տ. ՕՇԱԿԱՆ ԱՐՔ. ԶՕԼՈՅԵԱՆԻ ԵՒ ԱԶԳ. ԲԱՐԵՐԱՐ  
ՉԵՄՊԵՐՃԵԱՆ ԱՄՈԼԻ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ**

Հինգշաբթի, 22 Մայիսի առաւօտեան Ազգ. Առաջնորդարան այցելեցին Միացեալ Նահանգներու Արեւելեան Թեմի Առաջնորդ Բարձր. Տ. Օշական Արք. Զօլոյեան եւ Կիլիկեան Ս. Աթոռի «Կիլիկեան Իշխան» Ազգ. բարերար Տիար Գաբրիէլ Չեմպերճեան եւ իր ազնիւ տիկինը, որոնք ընդունուեցան Առաջնորդ Սրբազան Հօր կողմէ:

Յարգելի հիւրերը նախ շնորհաւորեցին Առաջնորդ Սրբազանը իր վերընտրութեան



առիթով եւ յաջողութիւն մաղթեցին անոր յառաջիկայ գործունեութեան: Զանդիպումը առիթ եղաւ խօսելու ապագայ ծրագիրներու եւ աշխատանքներու մասին:

Առաջնորդ Սրբազանը, իր կարգին, շնորհակալութիւն յայտնեց բարեմաղթութիւններուն համար, ապա, տեղեկութիւններ տուաւ Ազգ. Առաջնորդարանի յարկին տակ տարուող կրօնական եւ կրթական աշխատանքներու մասին, եւ յաջողութիւն մաղթեց Օշական Սրբազանին եւ Չեմպերճեան ամուլին՝ իրենց գործունեութեան բոլոր դաշտերուն մէջ:

## **PRELATE WELCOMES PRELATE H.E. ARCHBISHOP OSHAGAN CHOLOYAN AND BENEFACTORS MR. AND MRS. KAPRIEL CHEMBERJIAN TO THE PRELACY**

On the morning of Thursday, May 22<sup>nd</sup>, the Prelate welcomed at the Prelacy offices H.E. Archbishop Oshagan Choloyan, Prelate of the Eastern Prelacy, and benefactor Mr. and Mrs. Kapriel Chemberjian, who has been bestowed with the “Prince of Cilicia” by His Holiness Catholicos Aram I.

The guests congratulated the Prelate on his re-election and wished him success in his future endeavors. They also had the opportunity to discuss future projects and activities.

The Prelate thanked them for their kind remarks and detailed the activities that are carried out by the Prelacy. He conveyed his well wishes to Archbishop Choloyan and to the Chemberjian family in their future endeavors.

## **ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ՆԵՐԿԱՅ Կ' ԸԼԼԱՅ ԶԱՅ ՇՐՋԱՆԱԲԱՐՏՆԵՐՈՒ Ի ՊԱՏԻՒ CASPSԻ ԶԱՆԴԻՍՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ**

Զանրային վարժարաններու հայ աշակերտներու դպրոցական կեանքին հետեւող Ազգ. Առաջնորդարանի յատուկ յանձնախումբը՝ CASPS, 12րդ տարին ըլլալով կազմակերպած է արժանաւոր շրջանաւարտներու ի պատիւ ընդունելութիւններ:

Առաջին ձեռնարկը, որ նուիրուած էր Կլենտէյլի հանրային վարժարաններէն՝ Hoover, Glendale, Crescenta Valley եւ Clark Magnet երկրորդական վարժարաններէն շրջանաւարտ յաջողակ աշակերտներուն, տեղի ունեցաւ Զինգշաբթի, 22 Մայիսի յետմիջօրէին, Glenoaks-ի «Անուշ» ճաշարանին մէջ, Կլենտէյլ:

Առաջնորդ Սրբազանը ներկայ եղաւ հանդիսութեան եւ շրջանաւարտներուն ուղղեց իր բարեմաղթութեան ու օրհնութեան խօսքը: Ձեռնարկին ներկայ էին նաեւ Զայաստանի գլխաւոր հիւպատոս Տիար Արմէն Լիլոյեան, Ազգ. Վարչութեան անդամ՝ Տիար Կարօ Էշկիեան, Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւներէն Արժ. Տ. Արտակ Զինյ. Տեմիրճեան եւ հոգաբարձութեան անդամներ, ապա նաեւ Կլենտէյլի դպրոցական համակարգի պատասխանատուներ: Գլխաւոր բանախօսն էր

ծանօթ իրաւաբան Մարք Կիրակոս: Յարգանքի յատուկ խօսք մը ուղղուեցաւ աշխարհահռչակ գրող Ռիլիըմ Սարոյեանի յիշատակին. ծանօթ է, որ այս տարի անոր ծննդեան 100րդ տարեդարձն է:

Յայտնենք, որ CASPS-ի երկրորդ հանդիսութիւնը տեղի պիտի ունենայ Երեքշաբթի, 27 Մայիսին, եւ նուիրուած է Լոս Անճելըսի հանրային վարժարաններու համակարգի երկրորդ տեղամասի շրջանաւարտներուն:

Ներկայ պիտի ըլլան Առաջնորդ Սրբազանը, Արժ. Տ. Ռազմիկ Քիւյ. Խաչատուրեան եւ Ազգային Վարչութեան անդամներէն Տիար Վահէ Յովակիմեան:

## **PRELATE CONVEYS HIS BLESSINGS TO GRADUATING STUDENTS FROM THE GLENDALE AND LOS ANGELES UNIFIED SCHOOL DISTRICTS**

On Thursday, May 22<sup>nd</sup>, the 12<sup>th</sup> annual reception organized by the Committee for Armenian Students in Public Schools (CASPS) honoring outstanding Armenian graduating students from the Glendale Unified School District took place at Anoush Restaurant in Glendale.

The Prelate attended and conveyed his blessings and message to the students. Also in attendance was the Honorable Consul General of the Republic of Armenia Armen Liloyan, Fr. Ardag Demirjian, Executive Council member Mr. Garo Eshgjan, and members of the Glendale School District. The keynote speaker was Mark Geragos, Esq. There was also a special tribute to renowned author William Saroyan.

CASPS has also organized a reception in honor of outstanding students from the Los Angeles Unifies School District Local District 2, which will take place on Tuesday, May 27<sup>th</sup>. The Prelate will attend and convey his blessings to the students. He will be accompanied by Rev. Fr. Razmig Khatchadourian and Executive Council member Mr. Vahe Hovaguimian.

### *ՀԱՅԱՍՏԱՆ ՈՒՆՏԱԳՆԱՑՈՒԹԵՆԷ ԱՌԱՋ*

**ԱԶԳ. Վ. ԵՒ Ա. ՇԱՄԼԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԱԲԱՐՏԱԿԱՆ ԿԱՐԳԻ ԱՇՎԿԵՐՏՆԵՐԸ Ս. ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆ ՍՏԱՑԱՆ ԱԶԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՄԱՏՐԱՆ ՄԷՋ**

Ազգ. Վ. եւ Ա. վարժարանի տնօրէնն ու ուսուցիչները Չորեքշաբթի, 21 Մայիսին, գեղեցիկ աւանդութեան մը սկիզբը դրին, երբ վարժարանի աւարտական կարգի աշակերտները առաջնորդեցին Ազգային Առաջնորդարան, որպէսզի Հայաստան ուղեւորութենէ առաջ, Ս. Տրդատ եւ Ս. Աշխէն մատրան մէջ Ս. Հաղորդութիւն ստանան թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի ձեռամբ:

Ազգ. Առաջնորդարանի մուտքին, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան, կողքին ունենալով Արժ. Տ. Վազգէն Քհնյ. Աթմաճեանը, դիմաւորեց աշակերտներն ու դաստիարակները. անոնք զանգակատուն-յուշակոթողին առջեւ միասնաբար խմբանկար մը ունեցան: Ապա, աշակերտները ուղղուեցան «Ս. Տրդատ եւ Ս. Աշխէն» մատուռ, ուր Առաջնորդ Սրբազանը պատգամ մը տուաւ աշակերտներուն: Ան օրհնեց աշակերտները եւ յաջողութիւն մաղթեց անոնց. ապա նկատել տուաւ, որ մենք ամէն օր աղօթքով կը սկսինք մեր աշխատանքներուն, որպէսզի Աստուած յաջողութիւն պարգեւէ մեզի, նոյնպէս ալ, երբ կը պատարստուիք Հայաստան ճամբորդելու, ահաւասիկ եկած էք աղօթքով ու Ս. Հաղորդութիւն ստանալով զօրանալու այս ճամբորդութեան համար: Ս. Հաղորդութիւն ստացողը Աստուծոյ ներկայութիւնը կ'ապրի իր եութեան մէջ, կը ստանայ երկնային օրհնութիւն:



«Դուք շուտով մայր հայրենիք պիտի երթաք, Հայաստանի օդը, արեւը, ջուրն ու հողը պիտի զօրացնեն Ձեզ, մեր հայրերուն հաւատքը պայծառութիւն պիտի բերէ ձեր կեանքին»: Վերջապէս, Առաջնորդ Սրբազանը բարի ճանապարհ մաղթեց աշակերտներուն, եւ յոյս յայտնեց, որ այս ուխտագնացութիւնը նոր եռանդ պարգեւէ իրենց:

Ապա տեղի ունեցաւ խոստովանանքի ու Ս. Հաղորդութեան արարողութիւնը, որմէ ետք, աշակերտները նախաճաշեցին Առաջնորդարանի շրջափակին մէջ, ապա՝ համախմբուեցան «Տիգրան եւ Չարուհի Տէր Ղազարեան» սրահին մէջ, ուր տեղի ունեցաւ գողտրիկ հանդիսութիւն մը:

Երեք աշակերտներ դաշնակի վրայ նուագեցին, վարժարանին տնօրէնը՝ Տիար Վազգէն Մատենլեան կատարեց անակնկալ մը, իր կարգին երաժշտական կտոր մը ներկայացնելով: Ապա, Առաջնորդ Սրբազանին վերընտրութիւնը շնորհաւորելով՝ աշակերտները գեղեցիկ խաչ մը նուիրեցին անոր: Առաջնորդ Սրբազանը, իր կարգին, Ազգ. Առաջնորդարանը խորհրդանշող յուշանուէր մը յանձնեց աշակերտներուն, իբրեւ նուէր՝ դպրոցին:

Մօտաւորապէս երկու ժամ տեւած այս իւրայատուկ ուխտագնացութիւնը վերջ գտաւ հաւաքական աղօթքով ու «Կիլիկիա»ի խմբերգումով:

## V. & A. CHAMLIAN STUDENTS RECEIVE HOLY COMMUNION AT THE PRELACY CHAPEL

On the morning of Wednesday, May 21<sup>st</sup>, the principal and teachers of Vahan and Anoush Chamlian School accompanied the graduating class of 2008

to the Prelacy to receive Holy Communion by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, at the “St. Dertad and St. Ashkhen” Chapel, prior to their upcoming trip to Armenia.

The students, principal, and teachers, were greeted by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and Rev. Fr. Vazken Atmajian, and then headed to the bell tower monument for a group picture. The students were then led to the “St. Dertad and St. Ashkhen” Chapel where the Prelate



conveyed his blessings and message. He noted that just as we begin each day by praying to God to guide us in our daily endeavors, they had come to pray and to receive Holy Communion and the Lord’s blessings as they embark on their pilgrimage to Armenia. The Prelate concluded by wishing them a safe trip, and then offered Holy Communion.

Following breakfast, the students gathered at the “Dikran and Zarouhie Der Ghazarian” Hall where three students and Principal Vazken Madenlian performed on the piano. The students congratulated the Prelate on his re-election and presented him with a cross-stone, followed by the Prelate presenting the students with a memento as a gift to the school.

The visit came to an end with prayer and the singing of “Giligia”.

## **ԱՐԵՎՍՏԵԱՆ ԹԵՄԻ ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՈՒ ԱԶԳ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԴԻՎԱՆՆԵՐՈՒ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ**

Արեւմտեան մեր Թեմի Ազգային Երեսփոխանական Ժողովին (9 եւ 10 Մայիս) ընտրուած Կրօնական Ժողովի ու Ազգային Վարչութեան կազմերը Երեքշաբթի, 20 Մայիսին, Առաջնորդ Սրբազան Զօր՝ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի նախագահութեամբ, Ազգ. Առաջնորդարանին մէջ գումարեցին իրենց անդրանիկ նիստերը եւ ընտրեցին դիւանները:

Նիստերուն, ընթերցուեցան ընտրութեանց արդիւնքը հաստատող՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին գիրերը:



Կրօնական Ժողովի նիստը տեղի ունեցաւ յետմիջօրէին: Բացման՝ ներկայ եղաւ Զուէյթի եւ ծոցի երկիրներու Թեմի Կաթողիկոսական փոխանորդ Բարձր. Տ. Կորիւն Արք. Պապեան, որ կարճատեւ այցելութեամբ մեր Թեմը կը գտնուի: Զիւր Սրբազան

Զայրը շնորհաւորեց Առաջնորդ Սրբազանը՝ Ազգ. Երեսփոխանական



Ժողովին կողմէ չորրորդ քառամեակի մը համար իր վերընտրութեան առիթով ու վեր առաւ հոգեւորականաց դասու դերը՝ մեր Թեմի թէ ժողովուրդի կեանքին մէջ, մաղթելով, որ յառաջիկայ տարիները ըլլան աւելի աշխոյժ ու լայնատարած աշխատանքի շրջան:

Դիւանը կազմուեցաւ հետեւեալ ձեւով.-

- |                             |              |
|-----------------------------|--------------|
| S. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան   | Ատենապետ     |
| S. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան    | Փոխ Ատենապետ |
| S. Նարեկ Բհնյ. Փեղիւանեան   | Ատենադպիր    |
| S. Վիգէն Ա. Բհնյ. Վասիլեան  | Խորհրդական   |
| S. Ռազմիկ Բհնյ. Խաչատուրեան | Խորհրդական   |
| S. Վազգէն Բհնյ. Աթմաճեան    | Խորհրդական   |
| S. Վահան Բհնյ. Կոստանեան    | Խորհրդական   |

Տեղի ունեցաւ նաեւ միութեանց ու կազմակերպութեանց մօտ Առաջնորդ Սրբազանի ներկայացուցիչներու նշանակումը:



Ազգային Վարչութեան նիստը տեղի ունեցաւ երեկոյեան. ներկայ էր Ազգ. Կեդրոնական վարչութեան անդամ Տիար Խաժակ Տիքիճեան: Դիւանի ընտրութեան արդիւնքը եղաւ հետեւեալը.-

- |                            |              |
|----------------------------|--------------|
| Տոբթ. Կարօ Յակոբեան        | Ատենապետ     |
| Տիար Կարօ Աւագեան          | Փոխ Ատենապետ |
| Տիար Վահէ Յովակիմեան       | Ատենադպիր    |
| Տիար Միեր Տէր Յովհաննէսեան | Գանձապահ     |
| Տիար Ներսէս Մելքոնեան      | Խորհրդական   |
| Տիար Վարուժան Տէր Սիմոնեան | Խորհրդական   |
| Տոբթ. Նաւասարդ Գազազեան    | Խորհրդական   |
| Տիար Լեւոն Կիրակոսեան      | Խորհրդական   |
| Տիար Վահրիճ Փիլաւճեան      | Խորհրդական   |
| Տիար Կարօ Էշկիեան          | Խորհրդական   |
| Տիար Խաչիկ Երեցեան         | Խորհրդական   |

## **PRELACY RELIGIOUS AND EXECUTIVE COUNCILS ELECT THEIR OFFICERS**

On Tuesday, May 20, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, presided over the first meeting of the new Religious and Executive Councils, elected at the 36<sup>th</sup> Representatives Assembly, during which the election of the officers took place. During both meetings the letter by H.H. Catholicos Aram I approving the results of the elections was read.

The Religious Council meeting convened in the afternoon. Catholicosal Vicar of the Diocese of Kuwait and the Gulf, H.E. Archbishop Gorun Babian, participated in the opening of the meeting during which he congratulated the Prelate on his re-election to a fourth term and wished success to the clergy members in their future endeavors.

The Religious Council elected its officers as follows:

|                                 |               |
|---------------------------------|---------------|
| Very Rev. Fr. Muron Aznikian    | Chairman      |
| Very Rev. Fr. Barthev Gulumian  | Vice-Chairman |
| Rev. Fr. Nareg Pehlivanian      | Secretary     |
| Archpriest Fr. Vicken Vassilian | Advisor       |
| Rev. Fr. Razmig Khatchadourian  | Advisor       |
| Rev. Fr. Vazken Atmajian        | Advisor       |
| Rev. Fr. Vahan Gosdanian        | Advisor       |

Representatives were also appointed between the Prelacy and sister organizations.

The Executive Council meeting took place in the evening with the participation of Central Executive Council member Mr. Khajag Dikijian. They elected their officers as follows:

|                            |               |
|----------------------------|---------------|
| Dr. Garo Agopian           | Chairman      |
| Mr. Garo Avakian           | Vice-Chairman |
| Mr. Vahe Hovaguimian       | Secretary     |
| Mr. Meher Der Ohanessian   | Treasurer     |
| Mr. Nerses Melkonian       | Advisor       |
| Mr. Varoujan Der Simonian  | Advisor       |
| Dr. Navasart Kazazian      | Advisor       |
| Mr. Levon Kirakosian, Esq. | Advisor       |
| Mr. Vahrij Pilavjian       | Advisor       |
| Mr. Garo Eshgian           | Advisor       |
| Mr. Khatchig Yeretian      | Advisor       |



## ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՆԵՐԿԱՅ ԵՂԱՒ USCԻ ՀԱՅԱՓԻՏԱԿԱՆ ԱՄՊԻՈՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՁԵՌՆԱՐԿԻՆ

USC Համալսարանի Հայագիտական ամպիոնը Կիրակի, 18 Մայիսին, կազմակերպած էր իր երրորդ տարեկան պաշտոնական ճաշկերոյթը, որ տեղի ունեցաւ Universal City-ի «Հիլթըն» պանդոկին մէջ: Ձեռնարկը նուիրուած էր Քալիֆորնիոյ հայ գաղութի մասնաւորապէս վերջին 50 տարիներուն արձանագրած յառաջդիմութեան ու բարգաւաճման:



Առաջնորդ Սրբազանը ներկայ եղաւ հանդիսութեան ու ողջունեց հանդիսութեան ընթացքին պատիւի արժանացող անձնաւորութիւններն ու հիմնարկները, որոնք էին Մայք Բանըրզ, Ճորճ Տօքմէճեան, Փօլ Իգնատիոս, Ճերի Թարխանեան, Ռանըլտ Թութըր, Լինսի Հիմնարկին, Հայկական Միացեալ Հիմնադրամին ու «Քալիֆորնիա Զուրիք» թերթի հիմնադիրները, պատասխանատուներն ու վարիչները:

Առաջնորդ Սրբազանը ներկայ եղաւ հանդիսութեան ու ողջունեց հանդիսութեան ընթացքին պատիւի արժանացող անձնաւորութիւններն ու հիմնարկները, որոնք էին Մայք Բանըրզ, Ճորճ Տօքմէճեան, Փօլ Իգնատիոս, Ճերի Թարխանեան, Ռանըլտ Թութըր, Լինսի Հիմնարկին, Հայկական Միացեալ Հիմնադրամին ու «Քալիֆորնիա Զուրիք» թերթի

## PRELATE ATTENDS THE THIRD ANNIVERSARY BANQUET OF THE USC INSTITUTE OF ARMENIAN STUDIES

On Sunday, May 18<sup>th</sup>, the USC Institute of Armenian Studies celebrated its third anniversary with a gala banquet at the Universal City Hilton. The banquet was dedicated to the progress and prosperity of the Armenian community in California over the past fifty years.

The Prelate attended the banquet and met with the evening's honorees including Mike Connors, Governor George Deukmejian, Paul Ignatius, Jerry Tarkanian, Ronald Tutor, as well as the directors of the Lincy Foundation, United Armenia Fund, and the California Courier.



## ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՆԵՐԿԱՅ ԵՂԱՒ ՀԱՅ ԴԱՏԻ ՊԸՐՊԵՆՔԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ՁԵՌՆԱՐԿԻՆ

Պըրպէնքի Հայ Դատի Յանձնախումբը Կիրակի, 18 Մայիսի երեկոյեան, «Արպաթ» սրահին մէջ կազմակերպած էր իր երրորդ տարեկան

ճաշկերոյթ-հանդիսութիւնը, պատուելու համար Յայ Դատին ի նպաստ ծառայութիւն մատուցող անձնաւորութիւններ:



Առաջնորդ Սրբազանը Ներկայ եղաւ ձեռնարկին, կատարեց բացման աղօթքը եւ պատգամ մը ուղղելով՝ գնահատանք արձանագրեց Յայ Դատի աշխատանքներուն համար ու յաջողութիւն մաղթեց ծառայողներուն:

Ան ողջոյնի յատուկ խօսք ուղղեց գլխաւոր բանախօս՝ ծերակուտական Էտըմ Շիֆի, Յայ ժողովուրդի իրաւունքներուն ի նպաստ անոր կեցուածքին ու գործունեութեան համար:

Ներկայ էին նաեւ Պրրպէնքի քաղաքապետն ու քաղաքական եւ կազմակերպութեանց ներկայացուցիչներ:

Ձեռնարկին ընթացքին, Պրրպէնքի պաշտօնատարներուն եւ պատասխանատուներուն տեղեկութիւններ փոխանցուեցան Յայ Դատի աշխատանքներուն մասին, միաժամանակ գնահատանքի խօսք ուղղուեցաւ ի նպաստ հայ դատին ծառայող ոչ-հայ անձնաւորութիւններու:

## **PRELATE DELIVERS THE INVOCATION AND CONVEYS HIS MESSAGE AT THE ANC BURBANK THIRD ANNUAL BANQUET**

On the evening of Sunday, May 18<sup>th</sup>, the third annual banquet of the Armenian National Committee of Burbank took place, during which individuals who have contributed to the advancement of the Armenian cause were honored.

The Prelate delivered the invocation and conveyed his message to the guests, in which he commended the efforts of the ANC and wished success for their future endeavors. The Prelate also addressed Congressman Adam Schiff, commending his advocacy and support of the Armenian community.

During the banquet details of the activities of the ANC were conveyed to the guests and non-Armenian officials were commended for their support and encouragement of our community.